ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԶԲՆԱՔԱՅԼԵՐԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (XVIII դ. վերջ—XIX դ. սկիզբ)

Վ. Ա. ԴԻԼՈՅԱՆ

Հայ ազգային-ազատագրական շարժումների պատմությունն ուսումնասիրելիս չի կարելի զանց առնել լուսավորական շարժումը, իբրև ազգային-ազատագրական ձգտումների կարևոր բաղկացուցիչ, դրանց իրագործմանը մեծապես նպաստող գործոն։ Այդ հարցը անմիջականորեն առնչվում է գաղութահայ բուրժուազիայի կազմավորման և զորեղացման պրոցեսի հետ, որն ընդգրկում է գրեթե ամբողջ XVIII դ.։

Ազգային ինքնագիտակցության գալով և դառնալով կազմակերպված հասարակական ուժ, գաղութահայ բուրժուազիան, ելնելով իր դասակարգային շահերից, բնականաբար, պետք է լուրջ ուշադրություն դարձներ լուսավորության և գիտելիքների տարածման խնդրին։ Տարբեր երկրների հետ ունեցած նրա առևտրական կապերը այլևայլ լեզուների իմացության անհրաժեշտություն էին առաջացնում։ Հայ առևտրական բուրժուազիայի առաջադեմ ներկայացուցիչները նաև չէին կարող չազդվել XVIII դ. երկրորդ կեսին Արևմտյան Եվրոպայում լայն տարածում գտած լուսավորական գաղափարներից։ Հայտնի է, որ XVIII—XIX դդ. հայկական մշակույթը մեծ զարգացում ապրեց հայկական գաղթավայրերում, որտեղ տիրապետող բարձունքները գտնվում էին առևտրական բուրժուազիայի ձեռքին. այդ փաստը ինքնին խոսում է այն մասին, որ լուսավորական շարժման սկզբնաքայլերում առաջնությունը պատկանում էր հենց այդ բուրժուազիային, որի համար, անշուշտ, անկախ ու «լուսավորյալ» հայրենիքը կապիտալի գործառնության ավելի լայն ու հարմար հորիզոններ պիտի բացեր։

Շարժման նախաձեռնողները իրենց հայացքը նախապես հառել էին դեպի հայկական հին մշակույթը, այնտեղից քաղելով իրենց մտավոր և հոգեկան սնունդը։ Աստիճանաբար ասպարեզ էր գալիս բավականաչափ զարգացած մի գրական սերունդ, որը հին մշակույթի օգնությամբ աշխատում էր ինքնագիտակցության բերել դարավոր խավարի մեջ խարխափող ժողովրդին։

XVIII դ. երկրորդ կեսից սկիզբ առնող այս շարժումը քայլ առ քայլ զորանում է հատկապես հայկական այն գաղթավայրերում, որտեղ լուրջ կշիռ էր ձեռք բերում ազգային ինքնագիտակցության եկող հայ առևտրական բուրժուազիան։ Շարժումը սկսեց ցույց տալ տենդենցներ, որոնք որոշակիորեն հնի բացասումն էին և նորի հաստատումը։ Լուսավորական շարժման ծավալմանը մեծապես նպաստեց նաև տպագրական գործը։ Դա ոչ միայն կապիտալի նախասկզբնական կուտակման արտահայտություններից մեկն էր, այլև ազգային ինքնագիտակցություն դաստիարակելու միջոց։ Հիմնադրվում են դպրոցներ, որտեղ սկսում են ավանդական առարկաներին զուգահեռ ուսուցանել դասական և ժամանակակից եվրոպական լեզուներ։ Գրական ասպարեզ են իջնում մար-

դիկ, որոնք այս կամ այն չափով ծանոթ էին եվրոպական լուսավորությանը և աշխատում էին լուսավորության գործը դնել լայն հիմքերի վրա։ Շարժումն, հարկավ, դեռևս թերատ էր՝ շաղախված հին հասկացություններով ու սկզբունքներով, բայց այն արդեն կրում էր նորի ծիլերը, որը պետք է աճեր ու զարգանար՝ հաղթահարելով հինը։

Առաջինը հնամաշ բարուրներում շարժվեց հնդկահայ առևտրական բուրժուազիայի առաջավոր մասը, որի գոյությունը անգլիական կապիտալի մրցակցությունը դրել էր սպառնալիքի տակ։ Նրա կարկառուն ներկայացուցիչները՝ Շ. Շահամիրյանը, Մ. Բաղրամյանը և ուրիշներ դարձրին հայացքները դեպի իրենց ծնունդ տված երկիրը, այնտեղ փնտրելով հանգրվան։ Բայց արևելյան բռնապետությունների լծի տակ կքած հայրենիքը, որտեղ կապիտալի ապահովության ոչ մի երաշխիք չկար, առայժմ չէր կարող երազած հանգրվանը տալ այնքան ժամանակ, քանի դեռ չէր թոթափել բռնապետական լուծը։

Մի կողմից հայրենի երկրի նման դժնդակ վիճակը, մյուս կողմից եվրոպական լուսավորական շարժման հետ ունեցած որոշ ծանոթությունը նրանց հանգեցրին այն մտքին, որ պետք է հայրենիքն ազատագրել և այնտեղ հաստատել այնպիսի կարգեր, որոնք լավագույն հնարավորություններ կստեղծեին բուրժուազիայի հետագա զարգացման համար։ Ծնունդ առան ժամանակի հայ քաղաքական մտքի գլուխ-գործոցները՝ «Յորդորակը», «Որոգայթ փառացը», «Նշաւակը»։ Ստեղծվեց գրական-քաղաքական մի հոսանք, որը հայկական լճացած իրականության մեջ թարմ ու մինչև այդ անծանոթ գաղափարներ էր ներարկում։

Ռուսաստանում հայկական մշակույթը այն ժամանակ թեև չտվեց քաղաքական գրականության այդպիսի գլուխ-գործոցներ, բայց այստեղ էլ հայերի շրջանում ծնունդ առնող ազատագրական գաղափարները սկսում են ինչ որ չափով կապվել ժողովրդի ընդհանուր կուլտուրական մակարդակի հետ։ Վերցնենք թեկուզ այն տեսակետը, որ հայտնել է իր հայտնի «Հուշագրում» Հովհաննես Լազարյանը Ղարաբաղի մելիքների մասին։ Եթե Շ. Շահամիրյանը Հայաստանի ազատագրության հարցում հաջողության հասնելու համար մեծ հույսեր էր կապում հայ մելիքների հետ, ապա Հովհաննես Լազարյանը գտնում էր, որ նրանք չեն կարող ղեկավարել ազատագրական շարժումը, քանի որ «այդ հայ տիրակալների տգիտությունը նրանց ինչպես ամբողջ ազգի, այնպես էլ անձամբ իրենց համար դարձնում է անօգուտ»[1]։

Լուսավորության հարցի կապակցությամբ Ղարաբաղի մելիքներին անդրադառնում են նաև Մինաս և Հովակիմ Լազարյան եղբայրները 1777 թ. նոյեմբերի 6-ին իրենց հոր անունից Շահամիրյանին գրած նամակում։ Նրանք երազում էին՝ «երանի թե յաջողեսցի երբէք մեր ազգին այնպիսի բարեբախտութիւն և վիճակ, յորում զերծեալ ազատիցին ի վեհերոտեալ թմրութենէ ծուլութեան իւրեանց, և յոտն կայցեն ի սիրտ երկրի իւրեանց և ի ազատութիւն»[2]։ Այդ նպատակին հասնելու համար Լազարյան եղբայրները գտնում էին, որ «նախ պարտ է ազգին մերոյ. մանաւանդ ի Սղնախ և ի Ղարաբաղ եղելոցն, ունիլ լուսաւորութիւն մտաց, և թողեալ զսնոտի ունայնահաւատութիւն իւրեանց և զռամկութիւն, կրթիլ և վաստակիլ ի մրցմունս գիտութեան, պատմութեան և

[1] Архив АН СССР, ф. 99, оп. 2, д. 13, л. 60.

[2] ЦГИА СССР, ф. 880, оп. 5, д. 610, л. 27.

աշխարհածանօթութեան և լինիլ հասու մտօք այնմ նիւթոյ և բանից, զորոց ճառէ բարեյիշատակ որդին քոյ Յակոբ ընդ դաստիարակին իւրոյ հանճարամիտ Մովսէսի[3]։

Այսպիսով, առաջին պլանի վրա էր մղվում գիտության և լուսավորության հարցը, առանց որոնց հնարավոր չէ հասկանալ ո՛չ «Յորդորակի» գաղափարները, ո՛չ էլ պիտանի լինել հայ ազգային-ազատագրական շարժմանը։ Վերոհիշյալ տողերը ցույց են տալիս, որ Ռուսաստանում բնակվող հայ գործիչները ևս ազգային ազատագրության և վերածնության միջոց էին համարում լուսավորությունը։

Լազարյանների կարծիքով հայ հոգևորականությունը ևս պատասխանատու անելիքներ ուներ։ Նա պետք է քարոզեր ազգային ազատություն և հասկացներ ժողովրդին, որ աղոթքները և պասերը չէ, որ կհանգեցնեն դրան, այլ սերը, միաբանությունը և լուսավորությունը։ Նրանք գտնում էին, որ հոգևորականության գերը Հայաստանում մեծանում է առավել ևս նրանով, որ, պատմական հանդամանքների բերումով, հայ ժողովրդական զանգվածները մնում էին իրև «հայեցողք» «ի շրթունս նոցա», հպատակ հոգևորականության[4]։

Եվ միայն այն բանից հետո, երբ ժողովուրդը կարթնանար վեհերոտության թմրությունից, երբ նրա միտքը կլուսավորվեր, կզգար միաբանության ուժը և անհրաժեշտությունը, միայն այդ դեպքում Ղարաբաղի մելիքները կկարողանային ապստամբել տիրողների դեմ, հաղթել ու վոնդել նրանց, ազատություն ձեռք բերել, հակառակ դեպքում ամեն ինչ ի դերև կանցներ։

Չպետք է մոռանալ նաև այն, որ XVIII դ. երկրորդ կեսին Ռուսաստանում ևս լուսավորական շարժումը մեծ թափ ստացավ։ Եղավ ժամանակ, երբ այն ընդգրկեց նաև կառավարող շրջանները։ Այդ հանգամանքը ակնբախ էր և չէր կարող ազդեցություն չգործել Լազարյանների վրա։ Նրանք մեծ դեր և նշանակություն էին վերապահում լուսավորության գործին, համոզված լինելով, որ այն ազգային գոյատևման, զարգացման և ինքնապահպանման հիմնական աղբյուրն է։ Լուսավորության միջոցով է, որ հայ ժողովուրդը, դուրս գալով դարավոր թմրությունից և տգիտությունից, պետք է հաղորդակից դառնար եվրոպական քաղաքակրթությանը։ Դրա համար էլ Լազարյանները խիստ մեծ նշանակություն էին տալիս օտար լեզուների ուսուցմանը։ Հովհաննես Լազարյանը տարիներ շարունակ այն միտքն էր փայփայում, որ «հօգուտ իր ազգի ուսումնարան հիմնի և պահի»[5]։ Երկար ժամանակ նրա միջոցներով էին պահվում Նոր Նախիջևանի[6] և Թիֆլիսի դպրոցները[7], պայմանով, որ այնտեղ ուսումնասիրվեն բնական գիտություններ և օտար լեզուներ։ Բայց նրա հիմնական նպատակն էր «կառուցանել ի տէրութեան ռուսաց, ընդհանրական ուսումնարան մի՝ վասն հայկասեռ նրբամիտ բանասէր մանկանց։ Բայց յոքնադիմի զբաղմունք իւր՝ ոչ ներեցին նմա՝ մինչ կենդանին էր՝ լցուցանել զփափագ իւր»[8]։

---

3 Նույն տեղում։

4 Վ. Դիլոյան, Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Երևան, 1966, էջ 174։

5 ЦГИА СССР, ф. 880, оп. 1, д. 79, л. 94.

6 Մատենադարան, Լազարյան արխիվ, թղթ. 102, գ. 6, վ. 7։

7 Նույն տեղում, վ. 335։

8 Նույն տեղում, գ. 104, վ. 3։

Նազար Հակոբջան Շահամիրյանը ևս մատաղ սերնդի «բանականավայել լուսավորութեան մտաց» հետ էր կապում այն ակնկալությունը, որ «սակաւ միջոցի» Հայաստան աշխարհի անունը դուրս կհանվի «յանարգ դասաւորութենէ տգիտութեան»[9]։

Լուսավորության հարցը մտահոգում էր բոլոր նրանց, ովքեր տոգորված էին հայրենիքին ծառայելու պատրաստակամությամբ։ «Հայրենիքի և եկեղեցու» շահերն էին ստիպել Եփրեմ արքեպիսկոպոսին հայտարարելու, թե ինքը իր կյանքի մնացյալ տարիների նպատակն է համարում «յիւրաքանչիւրում քաղաքի համալսարանս հաստատել իմս արդեամբ և քրտամբ, որով ազգ մեր ոչ մնասցին ի կուրութեան, այլ օրըստօրէ ի լուսաւորութիւնս յառաջասցին...»[10]։ Կաթողիկոս դառնալուց հետո էլ նա նշում էր, որ «հանապազ զհետ պնդելով գտանելոյ անդէն զառիթս լուսաւորութեան մանկանց մերոյ բայց ոչ գտանեմ, ըստ որում ասիական կողմունք և դրութիւնք օգնեն ինձ ի նմին ոչ բնալ»[11]։

Բոլորը չէ, որ ներկան մռայլ գույներով էին պատկերացնում։ Այսպես, Հակոբ Շահան-Ջրպետյանը, գտնելով, որ «մեծամեծ գործառնութեանց կատարելութիւնք, տիրապետութեանց հիմնարկութիւնք, տէրութեանց տևողութիւնք, քաջապինդ մրցանաց շահատակութիւնք, լայնատարր խորհրդածութեանց դիտողութիւնք, բազմատեսակ ուսմանց և վարժարանաց արարչութիւնք, իմաստասէր և քաղաքավարեալ արանց բազմութիւնք, ցեղցեղ սոփեստալիր գրուածոց առատութիւնք, պետական և զինուորական օրինաց սահմանադրութիւնք, կղերական և աշխարհային կարգաց կանոնադրութիւնք, քաղաքաց, աւանից, ամրոցաց, ապարանից և տաճարաց հրաշակերտութիւնք, և այլ ազգի ազգի անմահական յիշատակաց վայելմունք չեն և չկարեն լինել գործ վայրենաբարոյ կամ իմաստատեաց ազգի ոմեք. զի են պտուղք իմաստութեան և սեպհական ձիրք քաղաքավարեալ արանց և ազանց»[12], անհրաժեշտ էր համարում այդ ամենը վերակենդանացնել հայ ժողովրդի գիտակցության մեջ, որովհետև ներկա անմխիթար վիճակը արդյունք է կյանքի պայմանների հետևանքով ոգու վաղեմի աշխուժության կորստի։ Ուստի հարկավոր է փութալ և «ի մի հաւաքել զառաքինի վարս, զիսոհական ասացուածս, զիմաստուն դիտմունս, զազգասիրական գործառնութիւնս, և զայլ յաւերժական գովութեանց արժանաւոր գործողութիւնս նախնեաց մերոց և ժամանակացուցն» «ի մշտնջենաւոր յիշատակ ազգային պարծանաց»[13]։

Լուսավորությունը, երիտասարդության ու մատաղ սերնդի կրթությանը հոգ տանելը, որպեսզի նրանք «ի նազելի թարմ տես մանկութեան իւրեանց կրթեալ ի պէս պէս գիտութիւնս, իմաստնայեղծ զգօնութեամբ իւրեանց լիցին կանգնօղք հայրենեաց, լուսաւորիչ հայրենակցաց և փառք և պարծանք համօրէն արամեանս տոհմի»[14], Շ. Ջրպետյանը համարում էր ազգային առաջնահերթ պահանջ։ Լուսավորությունն է պատճառը, որ «բազմագումար ազգք եւրոպացիք՝ որք երբեմն հանգոյն ներկեան մերոյ վիճակի յանգիտութեան և ի խաւարի

9 «Անցք կամ գործք», Մադրաս, 1806, էջ 7։
10 «Դիվան Հայոց պատմության», գիրք Ե., վ. ՃԼԸ։
11 Մատենադարան, Լազարյան արխիվ, թղթ. 105, գ. 13, վ. 4։
12 Նույն տեղում, Երիցյանի արխիվ, թղթ. 159, վ. 210գ։
13 Նույն տեղում։
14 Մատենադարան, Լազարյան արխիվ, թղթ. 106, գ. 14, վ. 1։

բերանաբաց խարխափէին զարդիս գեր քան զչափն հանդիսացեալք գովաբանին պերճապայծառ և սքանչելի օրինակաւ»[15]։

Ժամանակի հայ առաջադեմ գործիչները գիտակցում և հասկանում էին, որ կրթական գործը պետք է դուրս բերել վանական նեղ շրջանակներից, դարձնել ընդհանուր հասարակության սեփականություն, որ ժողովրդին չպետք է զրկել գիտությունը ճաշակելու բարիքից, մատաղ սերնդին կրթել, «թարց պարտավորելոյ զոք ընդդէմ իւրոյ կամաց ի կրոնաւորութիւն», քանի որ դրանով իսկ «զրկեն զժողովուրդն յաստուածատուր շնորհաց զոր պարգեալ է տէր վասն հասարակաց, և ոչ թէ միայն կրօնաւորաց»[16]։ Իր ժամանակի հայ իրականության համար սա մի խոշոր առաջընթաց քայլ էր, որը պետք է գիտությունը շղթայազերծեր կրոնական կապանքներից։

Նշանակալից է ու ժամանակի համար ողջունելի այն լայնախոհությունը, որ հանդես էին բերում հայ առաջադեմ գործիչները, մերժելով կրոնական խտրականությունը և դավանական իրարամերժությունը։ Լինելով լուսավորչադավան, նրանք ըմբռնում և գնահատում էին մշակույթի զարգացման գործում Մխիթարյանների ծավալած ազգանվեր գործունեությունը։ Այսպես, Հովակիմ Լազարյանը իր որդի Խաչատուրին խորհուրդ էր տալիս Եվրոպա շրջագայության գնալիս այցելել նաև Վենետիկ, «ուր տեսանել կարէք և Մխիթար աբբայի միաբանութիւն և հայոց մեծ ակադէմին»[17]։ Ռումինահայ գործիչներից Պողոս Սեբաստյանը գրում էր, որ Մխիթարյանները «ի պայծառութիւն ազգիս» «ուխտեալ իսկ են» և «զանձինս իւրեանց զոհեալ. և սա այս՝ վկայ հաւատարիմ արդիւնք նոցա արձանացեալ կան յանդիման ամենեցուն»[18]։ Մխիթարյան միաբանները, շարունակում էր Սեբաստյանը, «ունին զխաղաղական վարս և զկրթակտնութիւն ի ներքին և յարտաքին տեղեկութիւնս, թողից ատել զնախանձն հայրենեաց», որոնք «չեն անծանօթք ի ճշմարտասիրաց»[19]։ Նա գտնում էր, որ «կիրք յաշաղկոտաց չգտանեն անդ տեղի՝ ուր նախանձն ընտանի և հայրենի սիրոյ մերժէ և տարագիր առնէ զհեռ և զնախանձն չարին»[20]։

Այսպիսով, առաջնահերթ խնդիրը, որը նաև ժամանակի հրամայական պահանջն էր, հայ ժողովրդի միասնությունը և լուսավորությունը ապահովելն էր։ Ժողովրդի լուսավորության նախնական պայմանը նոր ժամանակի ոգուն համապատասխանող դպրոցների ստեղծումն էր, որի մասին այնքան մտահոգվում էին Հովհաննես Լազարյանը և առհասարակ բոլոր առաջադեմ գործիչները։

Հայ ժողովրդի մեջ լուսավորության տարածման գործում խոշոր դեր խաղաց 1815 թ. Մոսկվայում հիմնադրված Լազարյան ճեմարանը, որը միաժամանակ դարձավ հայ և ռուս ժողովուրդների բարեկամության խորհրդանիշներից մեկը։ Ճեմարանն իր գոյության առաջին իսկ օրերից հետամուտ էր հայկական միջավայրում լուսավորության տարածմանը և հայ մշակույթի զարգացմանը։ Չնայած արտաքին հզոր ազդակներին, խարդավանքներին և փոր-

15 Նույն տեղում։

16 Նույն տեղում, թղթ. 104, գ. 104, վ. 19։

17 ЦГИА СССР, ф. 880, оп. 1, д. 210, л. 190—190 об.

18 Մատենադարան, Երիցյանի արխիվ, թղթ. 159, վ. 210բ։

19 Նույն տեղում։

20 Նույն տեղում։

ձերին՝ շեղել ճեմարանն իր ուղեծրից և օգտագործել քաղաքական նպատակներով, Լազարյանների երախայրիք այդ կրթական հաստատությունը մեծ ծառայություններ մատուցեց հայ ժողովրդին, նրա մշակութային վերելքին։ Լազարյան ճեմարանը միաժամանակ յուրովի երևույթ էր հայ իրականության մեջ։ Ստեղծված լինելով հայ մատաղ սերնդի դաստիարակության, ժողովրդի լուսավորության համար, այն երբեք չպարփակվեց ազգային նեղ պատյանի մեջ, դուրս եկավ ազգային շրջանակներից և իր արժանի տեղը գրավեց համամարդկային մշակույթի պատմության մեջ, որպես Արևելքի ժողովուրդների հնադարյան մշակույթի, պատմության և լեզուների ուսումնասիրության գլխավոր կենտրոններից մեկը Ռուսաստանում։

Լազարյան ճեմարանի հիմնադիրներն ըմբռնում էին, որ ձեռնամուխ են եղել մի գործի, որը հայ ժողովրդի համար կենսական կարևորություն ունի։ «Այս գլխաւոր մի գործ է, օգտաւէտ և ազգային,— գրում էր Հովակիմ Լազարյանը,— ծախս և խարջ մեծ կրեմք, աշխարհ ամենայն ի մեզ հայի, մի գուցէ գործն սկսեալ, ծախիւք աւերեալ, անկատար մնասցուք, և ի մէջ աղգաց և աղանց. իւրոց և օտարաց՝ խայտառակեալ մնասցուք»[21]։

Սակայն գործը հաջողությամբ պսակվեց, և ճեմարանը կարողացավ հայ ժողովրդի կյանքում իր «օգտաւէտ և ազգային» դերը խաղալ։ Դեռ ճեմարանի գոյության սկզբնական շրջանում ժամանակի հայ գործիչները հասկացան Լազարյան ճեմարանի մեծ կոչումը և արժանապես գնահատեցին այդ լուսավորական-կրթական հաստատությունը։ Եթե մինչ այդ, Հովակիմ Լազարյանի արտահայտությամբ, «իբր կորագլուխ էաք ի մէջ ազգաց և ազանց», ապա ճեմարանի հիմնադրմամբ դրությունը որոշ չափով փոխվեց, որովհետև հայերը ևս ունեցան կրթական օջախ, «որ եթէ ոչ ասել պայծառ և գեղեցիկ քան զայլազգեաց, սակայն գեթ նման նոցին և ոչ նուաստ, զոր այժմ ունիք և ի պէտս ուսման մանկանց ձերոց ներկայից և հեռակայից մերազնեաց պիտոյացուցանել և վայելել կարէք, զի ձեր է՝ սիրելի ազգիս Հայոց»։ Դրա համար էլ Հովակիմ Լազարյանը իր հայրենակիցներին խնդրում էր «ընդունել և սիրել» այն որպէս «զդայեակ և զստինս ի լուսաւորութիւն մտաց որդւոց ձերոց և ապագայ ծննդոց Արամազնեաց», և ամեն կերպ օժանդակել նորոգ ուսումնարանին»[22]։

Լազարյան ճեմարանը համարելով «զարձան յաւերժական ի լուսաւորութիւն տանս Թորգոմեանս»[23], իբրև «իսկական միջոց լուսաւորելոյ զազգն և փառաւորելոյ զանուն նորա ի մէջ օտար ազանց», «գործ իմաստութեան արժանի բարոգելոյ յամենայն տեղիս, և թողլոյ զյիշատակ յապագայ եկելոց առ ի առնուլ զօրինակ բարի»[24], հայ գործիչները հույսով և լավատեսությամբ էին նայում իրենց ժողովրդի ապագային, որովհետև ստեղծվում էր մի օջախ, որը «յարուցանելու [էր] զազգ մեր արամեան ի քնոյ թմբրութեանն»[25], դառնալու էր «աթոռ յուսոյ մեծի և տեղի տիրագոյն մխիթարութեանց համօրէն ազգի»[26]։

Ժամանակի մտայնությունը բնորոշելու տեսակետից խիստ հատկանշա-

---

21 Մատենադարան, Լազարյան արխիվ, թղթ. 102, գ. 3, վ. 120։
22 Նույն տեղում, վ. 119։
23 Նույն տեղում, թղթ. 106, գ. 14, վ. 71։
24 Նույն տեղում, Երևանի արխիվ, թղթ. 159, վ. 210գ։
25 Նույն տեղում, Լազարյան արխիվ, թղթ. 106, գ. 14, վ. 37։
26 Նույն տեղում, թղթ. 103, գ. 9, վ. 74։

կան են Ներսես Աշտարակեցու թերևս մի փոքր չափազանցված զեղումները. «...ով կարէր ածել երբեմն ղմտաւ թէ յետ հազարաւոր շարաշուք ամաց՝ յաջորդելոց են ժամանակ շնորհաշուքք՝ յորս նեղեալ և վշտացեալ արամազնայք ոգի առնալ սնելոց են զյոյս վերանորոգութեան իւրեանց և տեսանելոյ զաւուրս բարութեանց»[27]։

Գիտակցելով իրենց ստեղծած ուսումնական հաստատության կարևորությունը հայ ժողովրդի հատկապես այն հատվածի համար, որն իր բախտը կապել էր Ռուսաստանի հետ, Լազարյանները կամենում էին «զի ուսումնարանն մեր եղիցի գլուխ հայոց դպրոցացն ողջոյն ըստ օրինակի համալսարանին ռուսաց ունիվերսիդետ կոչեցելոյ, և այնք իբրու անդամք կախէսցին զայնմանէ. նման ծառոյ ոսաովք աճելոյ որ ի ժամու տուեալ զպտուղ քաղցրացուցանէ զախորժակ զգոծիչ ծարաւի փափագանաց մարդկան»[28]։ Լազարյանների մտադրությունն էր Լազարյան ճեմարանի գլխավորությամբ Աստրախանի, Թիֆլիսի, Ղրիմի, Գրիգորիոպոլի, Նոր Նախիջևանի դպրոցները համախմբել (ռուսական համալսարանական սիստեմի հետևողությամբ) մեկ ընդհանուր կալմակերպության մեջ, հայ ժողովրդի լուսավորության գործը ավելի նպատակասլաց դարձնելու համար։ Ուստի նրանք բացատրում էին, որ «այլ խրախուսեալ եղաք լինել յայդ ձեռնամուխ հայելով յանյառաջադիմութիւն մերազնէից և անկայեալ յանօգնական վիճակ անկիրթ և անուս մանկանց. մանաւանդ ղի հայր Մանուել վարդապետն (Կյումուշխանեցին— Վ. Դ.) խնդրեալ է ի մէնջ և ինդրէ ցայսօր ղի դպրոցք նահանգին Ղրիմու և Գրիգորիապոլոյ եղիցին ընդ հովանիս ուսումնարանի մերոյ...»[29]։

Լուսավորության և նոր սերնդի դաստիարակության գործը չէր սահմանափակվելու միայն Լազարյան ճեմարանով, և ոչ էլ արդեն գոյություն ունեցող դպրոցներով։ Անհրաժեշտ էր բացել նոր դպրոցներ, որոնք իրենց մակարդակով և նպատակադրումներով պետք է տարբերվեին հին դպրոցներից։ Այդպիսի դպրոցների ստեղծման կարիք էր զգացվում նաև բուն Էջմիածնում, որտեղ Սիմեոն կաթողիկոսի ստեղծած ժառանգավորաց դպրոցը դադարեցրել էր իր գործունեությունը։ Այդ հանգամանքն է, որ դրդեց Հովակիմ Լազարյանին, 1811 թ. հուլիսի 6-ին դիմել Եփրեմ կաթողիկոսին և «անպատկառ յանդգնիլ» «խորհրդատու լինիլ» մի փոքրիկ դպրոց բացել Էջմիածնում և այնտեղ «թարց իւիք ցասման, բարկութեան և գանից պատժոյ հմտեցուցանել, զի բարկութիւն, սպառնա:իեօք ահացուցանելն և խիստ պատժելն բարբարոսական է գործ, միշտ խռովեցուցիչ և յուսահատեցուցիչ աշակերտի, նմանապէս և տախտկութիւն ուսուցչին» և այնտեղ հավաքված մանուկներին «հմտեցուցանել» «ի քերականութեան և ճարտասանութեան լեզուի մերում լաւապես կրթել ի աստուածաբանութեան, պատմութեան, աշխարհագրութեան և ի տաղաչափութեան»[30]։

Հովակիմ Լազարյանը հույս էր հայտնում, որ եթե «այսպիսի մի կարգաւորեալ փոքրիկ ուսումնարան այդր սկզբնաւորեալ հաստատեսցի, հաւաստի եմ որ բազում բարիս է վայելելոց սուրբ աթոռդ զի ի ապագայ դարս և ի ժամանակս ի նոցունց լաւ և պիտանի անդամս, նուիրակունս, առաջնորդս,

27 Նույն տեղում, թղթ. 105, գ. 13, վ. 159։
28 Նույն տեղում, թղթ. 106, գ. 14, վ. 37։
29 Նույն տեղում։
30 Մատենադարան, Երիցյանի արխիվ, թղթ. 155, վ. 31։

ուսուցիչս, այլ և հայրապետութեան արժանաւոր անձն էք ունելոց և ճաշակ կամ պտուղ այնպիսի կացուցմանց ի քիմս միաբանից մի անգամ անկեալ, այնքան ինքեանք սիրահար և կապակցեալ են լինելոց ընդ համալսարանին, որ շաւիղ նորին յաւէտ մնալով ամ ըստ ամի ծաղկելոց է ուսումնարանն այն և ժամանակաւ լինելոց նման կացուցման բարեյիշատակ Մխիթարա աբբայի ակադեմուն այսինքն համալսարանին...»[31]։

1813 թ. էջմիածնում Հովակիմ Լազարյանի առաջարկած փոքրիկ դպրոցի նման ժառանգավորաց մի դպրատուն է բացվում, որը անգամ Հնդկաստանի հայերի համար «ուրախութիւն և բերկրութիւն սրտի» եղավ, քանի որ նման «ազգաօգուտ» գործերը միշտ նրանց խնդութիւն են պատճառելու և որ իրենք «ըստ կարեաց մերոյ և ըստ խոստման ժամանակին սիրով մասնակից եմք լինելոց»[32]։

Եփրեմ կաթողիկոսը գիտակցում էր, որ էջմիածնի ժառանգավորաց դրպրատունը դեռևս հեռու է անհրաժեշտ կատարելութիւնից և բարձրութիւնից, բայց հույսը չէր կորցնում, որ ժամանակին այն ավելի աշքառու դեր կխաղա։ Ուստի նա Հակոբ Շահան-Ջրպետյանին գրում էր, որ «պինդ ունիմք կոչեալ առ աստուած զյոյս մեր գուցէ թէպէտ ոչ յայն աստիճան գիտնականաց մերոց և յազատ և ոսկեղէն դարս անցելոց, այլ սակայն ի մերուս այս ընդ ծառայութեամբ այլոց հասանիցեն բաղդատեալ զինքեանս ընդ նոսա և որոճեալ զբանս նոցին ի քիմս իմացականութեան իւրեանց»։ Իսկ հետագայում ամեն ինչ լավ կգնա, միայն թե «շնորհեսցէ տէրն զազատութիւն ծառայական լծոյ մերոյ, և տեսանել զգերագոյնն»[33]։

Այնքանով, որքանով մայր աթոռի վարժարանում անգլերենի և լատիներենի ուսուցիչ չկար, 1816 թ. Եփրեմ կաթողիկոսը Նվիրակ Վրթանես արքեպիսկոպոսի հետ երկու պատանիների՝ Դավթին և Սահակին ուղարկում է Հընդկաստան, որպեսզի մտնեն անգլիական ուսումնարան և «ուսանեն զպէսպէս լեզուս և արուեստս»[34]։ Այս փաստը ինքնըստինքյան վկայում է, որ Եփրեմ կաթողիկոսը իսկապես մտադիր էր էջմիածնում մի պատկառելի դպրոց ստեղծել, բայց քաղաքական իրադրությունը ի դերև հանեց նրա ջանքերը։

XIX դ. սկզբներին ռուսական կայսրության սահմաններում ստեղծված հայկական դպրոցներից և Լազարյան ճեմարանից հետո իր նշանակությամբ առաջինը, անկասկած, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցն էր։ Նա ևս կոչված էր «ի մի փարախ հայրենասիրութեան»[35] հավաքել հայկազուն մանուկներին։ Ներսիսյան դպրոցը ստեղծվեց Լազարյան ճեմարանի հետևողությամբ և անմիջական ազդեցությամբ, մանավանդ եթե նկատի առնենք այն հանգամանքը, որ Ներսիսյան դպրոցի հիմնադիր Ներսես Աշտարակեցին դեռևս 1807 թ. Նոր Նախիջևանում գտնված ժամանակ Հովակիմ Լազարյանի հանձնարարությամբ կազմել էր Լազարյան ապագա ճեմարանի կանոնադրությունը։ Ձեռնամուխ լինելով Ներսիսյան դպրոցի ստեղծմանը, Ներսես Աշտարակեցին իր առաջնահերթ խնդիրն էր համարում նրա ղեկավարումը, «զորս յառաջև յետոյ միմիայն

31 Նույն տեղում։
32 Նույն տեղում, կաթողիկ. դիվան, թղթ. 32, վ. 41։
33 Նույն տեղում, Լազարյան արխիվ, թղթ. 105, գ. 23, վ. 4։
34 Նույն տեղում, կաթողիկ. դիվան, թղթ. 32, վ. 41։
35 Նույն տեղում, Երիցյանի արխիվ, թղթ. 159, վ. 210բ։

է ինձ նպատակ համազգի բիւրեաց, ոչ խնայեցից ոչ զծանր և ոչ զթեթեւն ինձ, փութալ ի լրումն բաղձանաց իմոց այսոցիկ՝ անձամբ անձին, առանց յապաղելոյ»[36]։

Հովակիմ Լազարյանը խիստ բարձր էր գնահատում Ներսես Աշտարակեցու հայրենասիրական այդ ջանքերը և նրան դրում, որ «պէս պէս ազգաշէն մեծադործութիւնք վերերեալք յամենայն բարութեանց անքաքտացեալս ժամանակի յանխոնջ և յոքնաքիրտն ձեր երկասիրութենէ յանձառ ցնծութիւն զսիրտս հրաւիրեն զբարեսիրաց», որ «դերօգտակար դպրոցիդ» «սկզբնաւորութեան և առ սակաւ սակաւ կատարելագործութեան» համբավը «օր քան զօր յաճախելով առ լսելիսն իմ, յորդորէ զիս յաղօթս առ տէր կալ և հայցել հեղուլ ի ձեր վասն զկրկին հոգիս անուանակցաց ձերոց սրբոյ Ներսիսից Մեծին և Շնորհալւոյն՝ առ ի զողորմելի ազգս մեր յառաջին փառս վերածել յանթերի լրութիւն բաղձանաց»[37]։

Ազգային լուսավորության, դպրոցների հիմնադրման և մատաղ սերնդի դաստիարակության առնչությամբ վերևում բերված բոլոր փաստերը, դատողությունները, խոհերը, խորհրդածություններն ու մտահոգությունները վկայում են, թե հայ ժողովրդի ապագայի հարցում որքան մեծ տեղ էին գրավում և ինչպիսի համապարփակ խորհուրդ ունեին այդ հարցերը։

Հայոց լեզուն համարելով հայ ժողովրդի գոյատևման հիմնական երաշխիքներից մեկը, ժամանակի հայ գործիչները մտրակում էին բոլոր նրանց, ովքեր դժգոհում էին իրենց հայ ծնված լինելուց կամ ուրանում էին մայրենի լեզուն[38]։

Սկիզբ առնող լուսավորական շարժման մեջ նկատելի տեղ էր հատկացվում նաև հայ եկեղեցու կառավարման բարենորոգության խնդրին. դա կարիքը հատկապես սուր զգացվեց Դավիթ-Դանիելյան պայքարի տարիներին։

Մինաս Լազարյանին 1805 թ. օգոստոսի 16-ի Վրաստանի հայոց առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոս Գեղարդակրի ուղղած գրությունից[39] պարզվում է, որ Մ. Լազարյանը նույն թվականի հուլիսի 20-ի նրան հասցեած իր նամակում խոսել է էջմիածնում սյունհոդոս ստեղծելու մասին, որը նա «ի յերկնուստ ազդեցեալ» պատգամ էր համարում, քանի որ ինքը և իր գործակիցներն էլ այդ մասին են խորհել, բայց տարակուսել են, թե կգտնեն արդյոք «համաշունչ խորհրդակից»։ Նա ճշմարիտ էր համարում այն միտքը, որ մայր աթոռի և հայ ժողովրդի վրա եկած պատուհասների պատճառն այն էր, «զի մեք, և կամ որ ստոյգ ևս է՝ նախնիք մերս՝ թողեալ զլուսաւոր շաւիղս... ընթացաք զճանապարհ անկոխ... և վասն այնորիկ արժանապէս վերահասին մեզ այս ամենայն չարիք և վիշտք»[40]։

1805 թ. սեպտեմբերի 29-ին Մինաս Լազարյանը Թիֆլիս է ուղարկում սյունհոդոսի կանոնադրության իր կազմած տեքստը՝ բաղկացած 21 հոդվածներից, որն ընկալվում է «ըստ օրինակի գարնանաբեր հարաւային հողմոյ որ զարթուցեալ զերկիր ի սաստկասառոյց պաշարմանէ օդոյն ցրտութեան ձմե-

---

36 Նույն տեղում, Լազարյան արխիվ, թղթ. 105, գ. 13, վ. 158։

37 Նույն տեղում, Երիցյանի արխիվ, թղթ. 156, վ. 18։

38 Նույն տեղում, Լազարյան արխիվ, թղթ. 105, գ. 11, վ. 27 և թղթ. 106, գ. 14, վ. 29։

39 «Դիվան Հայոց պատմության», գիրք Ե., վ. ՃԿէ։

40 Նույն տեղում։

բայնոյ՝ ազդէ ի նա արտաքս առաքել ազգի ազգի տեսակս բազմագունի ծաղկանց ի զարդ վայելչութեան իւրոյ»[41]։ Հովհաննես, Գրիգոր, Բարսեղ արքեպիսկոպոսները և Ներսես Աշտարակեցին հույս էին հայտնում, որ շնորհիվ խորհրդարանի ստեղծման հնարավոր կլինի տեսնել «զբարեգրութիւն հոգևորականաց և մարմնաւորականաց ազգի մերոյ»։ Բայց նրանք չեն կամեցել ասել, թե ո՞վ է կանոնների հեղինակը, «զի մի ի ձէնջ աղդեցեալ լինելն հասանիցէ յականջս այլոց, որոց չիցէ արժան»[42]։ Պարզ է, որ Դանիել կաթողիկոսի անունից հետագայում հրատարակված 22 կանոններից բաղկացած սյունհոդոսի կանոնադրության բուն հեղինակը Մինաս Լազարյանն է։

Այս ամենի մասին Թիֆլիսից տեղեկացնում են Մարազայում բանտարկության մեջ գտնվող Դանիել կաթողիկոսին։

Շուտով Դանիել կաթողիկոսը ազատվում է բանտարկությունից, բազմում կաթողիկոսական գահին և էջմիածնի միաբանության համաձայնությամբ 1808 թ. մայիսի 25-ին, իր կաթողիկոս ձեռնադրվելու յոթերորդ տարեդարձի օրը, սահմանագրում և հաստատում է կառավարիչ սբ. ժողովը կամ սյունհոդոսը, որի «իրաւարար» կառավարությանը և իշխանությանը պետք է այսուհետև ենթարկվեին կաթողիկոսից սկսած մինչև ստորին հոգևորականը, ինչ և ամրապնդվում է հանդիսավոր երդման արարողությամբ։

Դանիել կաթողիկոսի հաստատած կանոնների համաձայն սբ. ժողովի անդամները պետք է կանոնավոր նիստեր գումարեին և բոլոր գործերի վերաբերյալ համապատասխան որոշումներ ընդունեին։ Հարցերը պետք է քննարկվեին սառը դատողությամբ, առանց փոխադարձ վիրավորանքների և օգտակարն ու լավը գտնելու ձգտումով։ Դատաստանական գործերի վերաբերյալ վճիռները պետք է գրավոր լինեին և ստորագրված սբ. ժողովի անդամների կողմից, խստորեն արգելվում էր նվերների ձևով կաշառք վերցնել դատաստանական գործերով սբ. ժողովին դիմող անձանցից։ Սբ. ժողովի անդամները պետք է ենթարկվեին բոլոր կանոններին, այլապես ենթարկվելու էին իրենց «գահակիցների» անաչառ դատաստանին[43]։

Սյունհոդոսը կամ կառավարիչ սբ. ժողովը գործեց նաև Եփրեմի կաթողիկոսության տարիներին և որոշ չափով նպաստեց խորհրդակցական կառավարման սկզբունքների կիրառմանը։

Ճիշտ է, հայ եկեղեցու կառավարման բարենորոգման այս փորձը խանական բռնությունների հետևանքով սպասված արդյունքներ չտվեց, բայց բարձրագույն խորհրդարանի հիմնումն ունեցավ սկզբունքային խոշոր նշանակություն։ Դա գաղութահայ բուրժուազիայի հաղթանակն էր հայ եկեղեցու կառավարումը կոլեգիալ դարձնելու գործում։ Դա միևնույն ժամանակ ցույց էր տալիս, որ հայ հոգևորականության ազդեցիկ մասը հետևում էր հայ բուրժուազիայի թելադրանքին, ինքն էլ էր շահագրգռված վերջ տալու միանձնյա կառավարման հնամենի եղանակին, որը շատ բան էր յուրացրել արևելյան բռնապետական կառավարման մեթոդներից։

Բարձրագույն խորհրդարանի ստեղծումն արժանացավ առաջադեմ տրամադրված գործիչների դրական գնահատականին։ Այս առումով առանձնահա-

---

41 Նույն տեղում, վ. ՃԿԹ։

42 Նույն տեղում։

43 «Դիվան Հայոց պատմության», գիրք Ա—Բ, էջ 229—231։

տուկ հետաքրքրություն է ներկայացնում Թավրիզում Աբբաս Միրզայի մոտ ծառայության մեջ գտնվող Միրզա Ռոստոմ Միրզա Կորկինյանի նամակը՝ հղված էջմիածնի սբ. ժողովին, որը նա «սէանաթ» է անվանում։ Միրզա Ռոստոմը գրում էր. «Մտածէք տեսէք ինչպէս որ սբ. սէանաթի խորհուրդն է մեք էլ նա կունդունիմք։ Եւ թէ մեք տեղս չլինէյինք այն ժամանակն տեսնէյիք թէ բանն ինչ կընդառնար և հաստատուն իմացէք որ միշտ հետևողութիւն այն է որ էդ սբ. սէանաթդ հաստատ մնայ և առանց սէանաթի խորհուրդին օչով չհամարձակվի աթոռի բանին խառնվիլ»[44]։

Բայց ամենամեծ հետաքրքրությունը ներկայացնում են Միրզա Ռոստոմի նամակի եզրափակիչ տողերը, որոնք վկայությունն են այն բանի, որ բռնապետական ռեժիմի ծառայության մեջ գտնվող այդ պաշտոնյան երազում էր առնվազն սահմանադրական միապետության մասին. «Եւ աստուծով կլինի ժամանակ, որ ինչպէս մեք սբ. սէանաթիդ ձեռք եմ գրէր։ Եւ ձեր հրամանքն էլ Լստեղի սէանաթին ձեռք դնէք»[45] (ընդգծումը մերն է— Վ. Դ.)։

Այսպիսով, ուսումնասիրության ենթակա ժամանակահատվածում ինչպես լուսավորական շարժումը, այնպես էլ հայ եկեղեցու կառավարության բարեռորգման հարցը հայ ազգային-ազատագրական շարժման էական բաղկացուցիչներն էին և հայ գործիչները իրավացիորեն ջանում էին դրանք ծառայեցնեն ազատագրական պայքարի շահերին։ Մատաղ սերնդի լուսավորությունը, կառավարման նոր ձևերի մուծումը կոչված էին արթնացնելու ազգային ինքնագիտակցություն և դրանով իսկ նպաստելու հայրենիքի ազատագրությանն ու վերածնությանը։ XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին սերմանվում էր մի արտ, որը մի փոքր ավելի ուշ հիանալի հունձ տվեց և դրանով իսկ զարկ տվեց հայրենի մշակույթի աննախընթաց վերելքին։

НАЧАЛО ПРОСВЕТИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ В АРМЯНСКОЙ ДЕЙСТВИТЕЛЬНОСТИ (КОНЕЦ XVIII в.—НАЧАЛО XIX в.)

В. А. ДИЛОЯН

Резюме

Со второй половины XVIII столетия в армянской действительности начинает играть заметную роль армянская торговая буржуазия в колониях. Под угрозой конкуренции иностранного капитала, пользующегося государственной поддержкой, она устремляла свой взор на родину, находящуюся под игом восточных деспотий, стремилась добиться ее освобождения. С этой целью большое внимание уделялось ею в первую очередь вопросам просвещения. Армянские деятели считали, что созданием школ и распространением знаний по естественным наукам и иностранным языкам смогут пробудить национальное самосознание в народе.

44 Մատենադարան, կաթողիկ. դիվան, թղթ. 21, վ. 158։

45 Նույն տեղում։

Учреждение в начале XIX в. Лазаревского института, училищ Нерсисяна и Агабабяна явилось ярким подтверждением этого стремления.

Стали серьезное внимание уделять также и вопросу правления армянской церкви — единственного института, рассматривающегося в качестве носителя армянской государственности. Стараниями представителей армянской буржуазии в колониях и находившихся под ее влиянием некоторых высших сановников церкви был учрежден Эчмиадзинский синод или Высший совет, призванный ограничить произвол единоначалия.